ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

18 հունիսի 2024թ.

N 154-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի ԹԻՎ 109-Ա ՀՐԱՄԱՆԸ ՄԱՍՆԱԿԻ՝ ԴՐԱ ՀԱՎԵԼՎԱԾԻ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ» ՑՈՒՑԱԿԻ 20, 95 ՀԱՄԱՐՆԵՐԻ ՆԵՐՔՈ ՆՇՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՆՐԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԿՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 24.05.2024թ. թիվ 01/13.10/3221-2024 գրությամբ ներկայացված հանգամանքը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2024 թվականի մայիսի 7-ի «Գնումների համակարգողների որակավորումը դադարեցնելու մասին» թիվ 109-Ա հրամանը մասնակի՝ դրա հավելվածի «Գնումների համակարգողների որակավորումը դադարեցված անձանց» ցուցակի 20, 95 համարների ներքո նշված անձանց (Արմինե Միրումյան, ՀԾՀ՝ 6210810446 և Լուսինե Հարությունյան, ՀԾՀ՝6909940318) մասով գնումների համակարգողի որակավորումը դադարեցնելը ճանաչել անվավեր, նրանց ներառել գնումների համակարգողների՝ 2024 թվականի շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների և տեղեկագրում հրապարակվող գնումների համակարգողի որակավորում ունեցող անձանց ցուցակներում:

2. Սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հրապարակումը տեղեկագրում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հասցեատերերին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Ստորագրող
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2903800432

2024-06-18 19:47:44 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՎԱՀԵ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ